ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

N 1080 -Ա
27.09.2010թ.

N 85 -Ա/1
25.08.2010թ.

ք. Երևան

## ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 345/03/79 ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բանակի կենտրոնական մարզական ակումբը (այսուհետ՝ բանակի կենտրոնական մարզական ակումբ) բարձրակարգ մարզիկներով համալրելու և նրանց՝ հետագա մարզումներին ու մրցումներին մասնակցության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Բանակի կենտրոնական մարզական ակումբը համալրել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի միջնորդությամբ ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի գործող անդամ հանդիսացող և վերջին երեք տարում հետևյալ մարզական նվաճումները ունեցող զորակոչիկներով.



1) օլիմպիական մարզաձևերից աշխարհի, Եվրոպայի առաջնություններում օլիմպիական խաղերում 1-ից 6-րդ տեղեր գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած կամ առաջիկա օլիմպիական խաղերի վարկանիշ ձեռք բերած մարզիկներ,

2) ոչ օլիմպիական մարզաձևերից աշխարհի և Եվրոպայի մեծահասակների կամ երիտասարդների առաջնություններում 1-ից 6-րդ տեղերը, պատանիների առաջնություն 1-ից 3-րդ տեղերը գրաված և առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկներ:

2. Սույն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթները տարածվում է խաղային մարզաձևերի մարզիկների վրա, եթե խաղային մարզաձևի ներկայացուցիչ թիմում մասնակցել է առնվազն 8 թիմ:

3. Զինվորական ծառայության ընթացքում համապատասխան մարզակա միջոցառումներին մասնակցելու համար գործուղումները թույլատրել բացառապե Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար միջնորդությամբ և.

1) Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Հայաստանի Հանրապետությա զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանով,

2) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ Հայաստան Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանով՝ համաձայնեցվա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հետ:

4. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին և Հայաստանի Հանրապետությա զինված ուժերի մարտական պատրաստության վարչության պետին՝

1) ուսումնասիրել բանակի կենտրոնական մարզական ակումբ պարտադի զինվորական ծառայության զորակոչելու կամ զինծառայողներին գործուղելու, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության այլ զորամասերում ծառայող մարզիկ զինծառայողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունից ստացված համապատասխան միջնորդությունները, և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետին 5-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություն,

2) հսկողություն սահմանել գործուղումների ընթացքի և ժամկետների ապահովման նկատմամբ:

5. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին՝

1) ապահովել բանակի կենտրոնական մարզական ակումբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող մարզիկների անվանացանկի՝ մարզական նվաճումները հաստատող փաստաթղթերով հանդերձ, ներկայացումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն՝ ոչ ուշ, քան զորակոչն սկսելուց 25 օր առաջ,

2) գործուղումների վերաբերյալ միջնորդությունները Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն ուղարկել յուրաքանչյուր գործուղման ժամկետից 15 օր առաջ՝ նշելով հավաքների կամ մրցումների վայրը և կցելով օրակարգը.

3) ապահովել բանակի կենտրոնական մարզական ակումբից զինծառայողների ժամանակին տեղափոխումը Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կամ մարզական ֆեդերացիաների տրամադրության ներքո, իսկ միջոցառման ավարտից հետո՝ բանակի կենտրոնական մարզական ակումբ,

4) հսկողություն սահմանել գործուղումների ընթացքի և ժամկետների պահպանման նկատմամբ,

5) զինծառայողների գործուղումների ժամկետների երկարաձգման անհրաժեշտություն առաջանալու դեպքում 10 օր առաջ գրավոր դիմել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն,

6) յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվար ամսին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն ուղարկել գործուղված յուրաքանչյուր զինծառայողի նախորդ տարվա մարզական ցուցանիշները:

6. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին՝

ստանձնել հրամանի կատարման հսկողությունը:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի նախագահի 2004 թվականի ապրիլի 21-ի N 345/03/79 համատեղ հրամանը:

8. Հրամանը հասցնել կատարողներին՝ ըստ առաքման ցուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՕՀԱՆՅԱՆ

«27» 09 2010 թ.

ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«__» ________ 2010 թ.